2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայտի հաստատման ամսաթիվը՝

1. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2026-2028 թվականների հիմնական նպատակներն ու վերջնական արդյունքի ցուցանիշները[1].

Նպատակներ են՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում.
2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում.
3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, հայագիտական, հումանիտար և հասարակական գիտությունների առաջանցիկ զարգացման ապահովում.

Վերոնշյալ նպատակների վերջնական արդյունքի ցուցանիշներն են՝

1. Ոլորտային համալիր հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումների, հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմանների առկայություն:
2. ՀՀ առաջատար խմբերում և արտերկրի լավագույն կենտրոններում «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրի», «Մասնագիտական վերապատրաստում ծրագրի», ինչպես նաև «Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրի» շահառուների առկայություն:
3. Հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված ծրագրի շրջանակներում ՀՀ վերադարձած գիտնականների կողմից ղեկավարվող գիտական ստորաբաժանումների և հեռավար ղեկավարվող գիտական խմբերի առկայություն, որոնք բացի գիտական ժամանակակից հետազոտություններից իրականացնում են նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում, ինչպես նաև հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների

[1] *Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունը կից ներկայացվում է պահանջվող ձևաչափով Հավելված 3-ի Մաս 3-ում:*

և գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի առկայություն:

2. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2026-2028 թվականների համար առաջնահերթ են[2]՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում:

Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացվածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլև ընձեռելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 27-րդ կետի՝**

- **27.1-ին ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշման՝ 2026 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 9,900,000.0 հազ. դրամ, իսկ 2027-2028 թվականների համար նախատեսվում է պահպանել 2026 թվականի ֆինանսական ծավալը:
- **27.5-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է ապահովել գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, որի համար ըստ վերոնշյալ որոշման՝ 2026 թվականին ՀՀ պետական բյուջեից

[2] *Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի վերոնշյալ ծախսային գերակայությունները հակիրճ շարադրված են նաև Մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 12-ով ներկայացված ձևաչափում:*

նախատեսվում է հատկացնել 700,000.0 հազ. դրամ, իսկ 2027-2028 թվականների համար նախատեսվում է պահպանել 2026 թվականի ֆինանսական ծավալը:

➢ **27.6-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրեր:

Մասնավորապես, զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը՝

- ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 17 ծրագրեր՝ մինչև 2025 թվականն իրականացրած 87-ի փոխարեն (նվազումը պայմանավորված է հայ-բելառուսական, հայ-ռուսական և գիտական հետազոտությունների աջակցության Եվրասիական ասոցիացիայի հետ անցակցված գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի կատարման ժամկետի ավարտով), մասնավորապես, Վրաստանի Հանրապետության Շոթա Ռուսթավելու անվան գիտության ազգային հիմնադրամի հետ առաջին անգամ հայտարարված գիտական նախագծերի աջակցության համատեղ մրցույթի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել 3, Հայաստան-Իտալիա համագործակցության շրջանակում՝ 10 և Հայաստան-Գերմանիա համագործակցության շրջանակում՝ 4 գիտական նախագծեր,

- գործում է նաև ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը, ինչպես նաև բանակցություններ են վարվում Չինաստանի երկրաշարժերի վարչության հետ «Երկրաշարժի մշտադիտարկում և մոդելավորում» (EMS) միջազգային ասոցացված լաբորատորիայի» գործունեության շարունակականության համար, ինչպես նաև Մոլդովայի հետազոտությունների և մշակումների ազգային գործակալության հետ գիտական նախագծերի աջակցության մրցույթն առաջիկայում կազմակերպելու ուղղությամբ:

2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում՝

Գիտության ոլորտում աշխատողների որակավորման և աշխատավարձի բարձրացումը, երիտասարդ կադրերի ներգրավումը գիտության մրցունակության բարձրացման հիմնական գործիքներն են:

ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը:

Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 28-րդ կետի՝**

- **28.1-ին ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը:
- **28.2-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել գիտական կադրերի (PHD, PostDoc) վերապատրաստման մրցութային ծրագրի իրականացումը:
- **28.3-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերին ուղղված մրցութային (PostDoc-Armenia) ծրագիրը:

Պետք է շարունակել իրականացնել նաև՝

- 2024 թվականին առաջին անգամ իրականացված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Web of Science» կամ «Scimago Journal & Country Ranking») ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար մրցույթի կազմակերպումը,

- 2025 թվականին առաջին անգամ իրականացված «Հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառի ամսագրերը Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկվելու համար ֆինանսական աջակցությանն ուղղված» մրցույթի կազմակերպումը,

- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա դրամաշնորհային մրցույթի կազմակերպումը,

- գիտական խմբերի մեկնարկային և գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված եռամյա կամ հնգամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպումը,

- կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված մրցույթի կազմակերպում,

- գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային մրցույթի կազմակերպումը,

- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցույթի կազմակերպումը,

- առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիրը, երբ դրամաշնորհը հատկացվում է գիտական նշանակալի նվաճումներ ունեցող գիտաշխատողին՝ հետազոտական խումբ ձևավորելու և հավակնոտ թեմայով հետազոտական ծրագրեր իրականացնելու համար:

3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում:

Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվում է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետի՝**

➢ **29.4-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված ծրագրի իրականացումը:

➢ **29.6-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցութային ծրագիրը, որի համար ըստ վերոնշյալ որոշման՝ 2026 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2,500,000.0 հազ. դրամ, իսկ 2027-2028 թվականների համար նախատեսվում է պահպանել 2026 թվականի ֆինանսական ծավալը:

Պետք է շարունակել իրականացնել նաև՝

- 2023 թվականին կազմակերպված հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր աջակցության ծրագիրը, որն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության կարևորագույն և հեռանկարային ուղղություններով (Artificial Intelligence and Data Science (Արհեստական բանականություն և տվյալագիտություն), Quantum technologies (Քվանտային տեխնոլոգիաներ), Robotics (Ռոբոտատեխնիկա), Biotechnology and Human Enhancement (Կենսատեխնոլոգիա և մարդու լավարկում), Material science (Նյութագիտություն) և Green deal (Կանաչ գործարք)) ինովացիոն բնույթի մրցունակ և բարձր սոցիալ-տնտեսական ազդեցություն ունեցող առաջադեմ գիտահետազոտական նախագծերի իրականացմանը,
- երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագիրը,
- փորձարարական մշակումների դրամաշնորհային ծրագիրը, որի գնահատման ժամանակ առաջին անգամ կիրառվել է տեխնոլոգիաների պատրաստության աստիճանի միջազգային սանդղակը (TRL grades):

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ և բազային բյուջեի գնահատում

2026-2028 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ***բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորումները***[3]:

[3] *Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններն ամփոփվել են Մեթոդական ցուցումներին կից Հավելված 3-ի Մաս 3-ում ներկայացված աղյուսակում:*

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը հատկացվելու է ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման» կարգին համապատասխան՝ ՀՀ գիտական պետական կազմակերպություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ կազմակերպություն) հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի՝ կազմակերպության կենտրոնների, լաբորատորիաների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների պահպանման ու զարգացման և գիտական հետազոտությունների ու մշակումների իրականացման ծրագրի, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի, գիտական կադրերի պատրաստման ծրագրի, ինչպես նաև կազմակերպություններին ժամանակակից սարքավորումներով վերազինման և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով: Համապատասխան կարգը նախատեսում է նաև կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման գործիքներ, որոնցով պայմանավորված կազմակերպություններն այսուհետ կստանան կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման համար, ինչպես նաև կսահմանի գիտական արդյունքի որակի ավելի բարձր նշաձող:

Միաժամանակ, սկսած 2025 թվականի հունվարի 1-ից գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնների համար աշխատավարձի հաշվարկը կատարվում է վերոնշյալ կարգով նախատեսված «Գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոններում աշխատողների նվազագույն դրույքաչափի հաշվարկման գործակիցներ» աղյուսակով սահմանված գործակցի և բազային աշխատավարձի (66 140 ՀՀ դրամ) արտադրյալով:

Համապատասխանաբար գիտական պաշտոնների համար՝

կրտսեր գիտաշխատող՝ *210 325.2 հազ. դրամ,*

գիտաշխատող՝ *275 803.8 հազ. դրամ,*

ավագ գիտաշխատող՝ *343 266.6 հազ. դրամ,*

առաջատար գիտաշխատող՝ *443 799.4 հազ. դրամ*

գլխավոր գիտաշխատող՝ *552 930.4 հազ. դրամ,*

պատվավոր առաջատար գիտաշխատող՝ *343 266.6 հազ. դրամ,*

պատվավոր գլխավոր գիտաշխատող՝ *443 799.4 հազ. դրամ,*

գիտական խմբի ղեկավար՝ *410 068.0 հազ. դրամ,*

գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)՝ *476 869.4 հազ. դրամ:*

Ճարտարագիտատեխնիկական պաշտոնների համար՝

լաբորանտ-L1 կամ ճարտարագետ՝ *138 232.6 հազ. դրամ,*

ավագ լաբորանտ-L2 կամ ավագ ճարտարագետ՝ *179 239.4 հազ. դրամ:*

2. Նպատակային-ծրագրային ֆինանսավորումը հատկացվելու է գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի կատարմանը, որն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն Որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային – ծրագրային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման» կարգի:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորում հատկացվելու է գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական մշակումների հանգեցնող, գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ հետազոտական նախագծերի իրականացմանը, որպես դրամաշնորհ՝ համաձայն Որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման» կարգի:

ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտություն» բաժնով առաջարկվող դրույթները և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը ենթադրում են պետական բյուջեից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով,

այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով:

1. «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» միջոցառումների իրականացման համար պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2025 թվականին կազմում են **33,462,263.8 հազ. դրամ**, իսկ 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **42,126,012.6**, **43,200,215.2 և 43,986,408.2 հազ. դրամ,** որից՝

1) «11002. Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառումն ուղղված է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացմանը, ծրագրերի իրականացմանը, գիտական սարքավորումների արդիականացմանը, միջազգային համագործակցության աջակցությանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **14,158,889.7 հազ. դրամ,** իսկ 2026-2028 թվականներին՝ **18,504,908.1-ական հազ. դրամ**, որից.

ա. 12,724,893.8 (2025թ.) և 12,729,840.4-ական հազ. դրամն (2026-2028թթ.) ուղղվելու է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների բազային ֆինանսավորմանը,

բ. 460,103.4-ական (2025թ.) և 1,000,000.0-ական հազ. դրամն (2026-2028թթ.) ուղղվելու է Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցությանը,

գ. 2,500,000.0-ական հազ. դրամն (2026-2028թթ.) ուղղվելու է Հասարակագիտական և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականցմանը,

դ. 15,000.0 (2025թ.) և 25,000.0-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է գիտության մասսայականացման աջակցությանը**,**

ե. 662,892.9 (2025թ.) և 1,549,067.7-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է միջազգային գիտական ծրագրերի, կառույցների անդամակցությանը և գիտատեղեկատվական շտեմարանի ռեսուրսների օգտագործմանը (ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագիր, Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ –

JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ - H.E.S.S.), Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցություն (COST ասոցիացիա), Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիում (iBOL, մինչև դեկտեմբերի 31, 2025 թվական), ինչպես նաև գիտատեղեկատվական շտեմարանների բաժանորդագրություններ՝ Քլարիվեյթ Անալիտիքս, Էլզեվիեռ Ռեաքսիս, ինչպես նաև նախատեսվում է բաժանորդագրություն Էլզեվիեռ և Ուայլի գիտատեղեկատվական շտեմարաններին,

զ. 25,000.0-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է արշավախմբերի կազմակերպմանն ու համակարգի գիտական գործուղումների իրականացմանն աջակցությանը,

է. 100,000.0-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցությանը,

ը. 10,000.0 (2025թ.) և 15,000.0-ական հազ. դրամը (2026-2028թթ.) ուղղվելու է երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպմանն աջակցությանը,

թ. 30,000.0-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է գիտական միջոցառումների կազմակերպմանն աջակցությանը,

ժ. 15,000.0-ական հազ. դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է գիտական հայտերի և հաշվետվությունների ընդունման, փորձագիտական առցանց համակարգի պահպանման և գիտական փորձաքննության ֆինանսավորմանը,

ժա. 16,000.0-ական հազ.դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնի պահպանմանը,

ժբ. 100,000.0-ական հազ.դրամն (2025-2028թթ.) ուղղվելու է միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրատարակությունների աջակցությանը,

ժգ. 100,000.0-ական հազ.դրամն (2026-2028թթ.) ուղղվելու է հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառի ամսագրերը Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկվելու համար ֆինանսական աջակցությանը,

ժդ. 300,000.0-ական հազ.դրամն (2026-2028թթ.) ուղղվելու է ՀՀ գիտական համայնքին ինտեգրված օտարերկրյա և ՀՀ-ում նոր աշխատակիցների աշխատանքի վարձատրության ապահովում:

«11002. Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման ֆինանսական ծավալի փոփոխությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 29.6 միջոցառման համար նախատեսված ֆինանսական ծավալով՝ 2,500,000.0 հազ. դրամ, ինչպես նաև միջազգային գիտական ծրագրերի մասնակցության, կառույցների անդամակցության և գիտատեղեկատվական շտեմարանների հանար նախատեսված ֆինանսական ծավալներով, որոնց մասնակցության վճարի չափը կախված է ՀՀ մասնակցության արդյունքներից և փոխվում է յուրաքանչյուր տարի, մասնավորապես, ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի ֆինանսական ծավալը 2026 թվականին կազմում է շուրջ 3 մլն եվրոյին համարժեք դրամ:

2) «11004. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառումն ուղղված է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց-ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի պահպանմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **962,891.3 հազ. դրամ**, 2026-2028 թվականներին՝ պահպանելով նույն ֆինանսական ծավալը.

3) «11005. Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **9,142,839.0 հազ. դրամ,** իսկ 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **10,017.956.4, 10,942,159.0 և 11,578,352.0 հազ. դրամ** (ֆինանսական ծավալի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 27.5, 28.1, 28.2, 28.3 և 29.4 միջոցառումներով), որի շրջանակներում ֆինանսավորվելու են՝

ա. գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիրը,

բ. երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունները,

գ. ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունները,

դ. միջազգային գիտական համագործակցության շրջանակներում գիտական ծրագրերի աջակցությանն ուղղված ծրագրերը,

ե. առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիրը,

զ. արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագիրը,

է. փորձարարական մշակումների նախագծերի աջակցությանն ուղղված ծրագրերը,

ը. պետության պահանջարկի վրա հիմնված (demand driven) հետազոտությունները,

թ. ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024» վերապատրաստման ծրագիրը,

ժ. ADVANCE հետազոտական դրամաշնորհային նախագծերի աջակցությանն ուղղված ծրագիրը,

ժա. երկակի նշանակության հետազոտությունների աջակցության ծրագիրը,

ժբ. հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծերի աջակցության ծրագիրը,

ժգ. «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների հետազոտությունների աջակցության ծրագիրը,

ժդ. կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագրերի աջակցության ծրագիրը,

ժե. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա պետությունների դասախոսների կարճաժամկետ այցելությունների ծրագիրը,

ժզ. հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիրը,

ժէ. ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիրը,

ժը. գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության ծրագիրը:

4) «11006. Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է մրցութային հիմունքներով ընտրված գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող

գիտատեխնիկական պետական ծրագրերի իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **305,766.0 հազ. դրամ**, իսկ 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար **455,766.0, 605,766.0 և 755,766.0 հազ. դրամ**.

5) «11007. Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառումն ուղղված է գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **95,556.3 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը**.**

6) «11008. Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում» միջոցառումն ուղղված է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանը և գիտական ներուժի արդիականացմանը, ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **1,031,865.3 հազ. դրամ,** իսկ 2026-2028 թվականներին՝ **1,115,757.3-ական հազ. դրամ**.

7) «11009. Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» միջոցառումն ուղղված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի պահպանմանը և արագացուցչային փորձարարական լաբորատորիաների զարգացմանը, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **257,961.2 հազ. դրամ**, 2026-2028 թվականներին՝ **262,520.2-ական հազ. դրամ** (ֆինանսական ծավալի փոփոխությունը պայմանավորված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի գույքահարկի վճարով).

8) «11010. Էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառումն ուղղված է ՀՀ ազգային էտալոնների պահպանմանն ու զարգացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **45,000.0 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը**.**

9) «11012. Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)» միջոցառումն ուղղված է գրադարանային հավաքածուների պահպանմանը և համալրմանը, ընթերցողների սպասարկմանը, գրադարանային միջոցառումների կազմակերպմանը, որի

համար 2025 թվականին հատկացվել է **150,630.1 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը.

10) «11019. Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառումն ուղղված է ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնմանը, միջազգային կապերի զարգացմանը, ատենախոսությունների թվայնացմանը և գիտնականների շտեմարանների ստեղծմանն ու շահագործման գործընթացների իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **52,826.9 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը.

11) «12001. Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառումն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարների տրամադրմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **450,000.0 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը (ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 33-Ն որոշմանը համապատասխան).

12) «12002. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ» միջոցառումն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **112,200.0 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին նախատեսվում է պահպանել 2025 թվականի նույն ֆինանսական ծավալը (ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 6-ի N 102 որոշմանը համապատասխան).

13) «32004. Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում» միջոցառումն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **5,518,838.0 հազ. դրամ**, իսկ 2026-2028 թվականներին՝ **9,900,000.0-ական հազ. դրամ** (ֆինանսական ծավալի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026

թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 27.1 միջոցառումով).

14) «32005. Արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացում» միջոցառումն ուղղված է որակյալ ենթակառուցվածքի ստեղծմանը, որն առաջ կմղի արհեստական բանականության հետազոտությունները, նորարարությունները և կնպաստի տեխնոլոգիական առաջընթացին և տարբեր ոլորտներում բարդ խնդիրների լուծումների մշակմանը, որի համար 2025 թվականի հատկացվել է **1,177,000.0 հազ. դրամ:**

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն հայտին կից Հավելված 1-ի Ձևաչափ 1-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Գոյություն ունեցող բոլոր ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքները ներկայացված են ամփոփ տեսքով՝ սույն հայտին կից Հավելված 3-ի Մաս 4-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասները կներկայացվեն 2026թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ Հավելված 4-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

3.2. Նոր նախաձեռնություններ

Նոր նախաձեռնություններ նախատեսված չեն:

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսեր

2026-2028 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» միջոցառումների շրջանակում իրականացվող ծախսերի հիմքում դրված պարտավորությունները կրում են պարտադիր բնույթ, դրանք են՝

1. Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ[4]

➢ «11001. Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ»,

[4] *Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է սույն հայտին կից կից Հավելված 1-ի ներկայացված աղյուսակում:*

- «11002. Գիտական ենթակառուցվածքի արդիականացում», որն ուղղված է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացմանը, ծրագրերի իրականացմանը, գիտական սարքավորումների արդիականացմանը, միջազգային համագործակցության աջակցությանը,
- «11004. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն», որն ուղղված է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց-ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի պահպանմանը,
- «11005. Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ», որն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը,
- «11006. Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ», որն ուղղված է մրցութային հիմունքներով ընտրված գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի իրականացմանը,
- «11007. Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում», որն ուղղված է գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը,
- «11008. Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում», որն ուղղված է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանը և գիտական ներուժի արդիականացմանը, ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը,
- «11009. Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում», որն ուղղված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի պահպանմանը և արագացուցչային փորձարարական լաբորատորիաների զարգացմանը, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը,

- «11010. Էտալոնների պահպանում և զարգացում», որն ուղղված է ՀՀ ազգային էտալոնների պահպանմանն ու զարգացմանը,
- «11012. Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)», որն ուղղված է գրադարանային հավաքածուների պահպանմանը և համալրմանը, ընթերցողների սպասարկմանը, գրադարանային միջոցառումների կազմակերպմանը,
- «11019. Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում», որն ուղղված է ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնմանը, միջազգային կապերի զարգացմանը, ատենախոսությունների թվայնացմանը և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը,
- «12001. Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ», որն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարների տրամադրմանը,
- «12002. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ», որն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրմանը,
- «32004. Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում», որն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանը:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. ՄԻՋՈՒԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2026-2028 թթ. ժամանակահատվածի համար գիտական և գիտատեխնիկական բնագավառի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները) ամփոփվել է սույն հայտին կից՝ Հավելված 8 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել է սույն հայտին կից՝ Հավելված 10-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ / ԱՆՁՆԱԳԻՐ/

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2026 թվականի բյուջետային ծրագրի նկարագիրը /անձնագիրը/ կամփոփվի 2026թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ Հավելված 13-ում ներկայացված ձևաչափին համապատասխան: